ԼԻԼԻԹ ԵՐՆՋԱԿՅԱՆ. Ալան Հովհաննեսի երաժշտությունը Արևելք–Արևմուտք մշակութային խաչուղիներում, *Երևան, ՀՀ ԳԱԱ “Գիտություն” հրատ., 2015, 140 էջ:*

Սփյուռքահայ երաժշտարվեստի նշանավոր ներկայացուցիչներից մեկը՝ ամերիկահայ տաղանդավոր կոմպոզիտոր, դիրիժոր, դաշնակահար, երգեհոնահար Ալան Հովհաննեսը (Ալան Վանես Չաքմաքչյան, 1911, Սոմերվիլ – 2000, Սիեթլ), ստեղծագործական ժանրային և թեմատիկ բազմազանությամբ օժտված XX դարի ինքնատիպ ու ամենաբեղուն կոմպոզիտորներից է:



Ալան Հովհաննեսի ստեղծագործությունների վերաբերյալ բազմաթիվ գրախոսականների ենք հանդիպում հայկական և միջազգային մամուլում, տարբեր տարիներին գրված հայ և օտարազգի հետազոտողների մագիստրոսական թեզերում ու թեկնածուական ատենախոսություններում (մենագրության հեղինակն առանձնացնում է Առնոլդ Ռոզների հետազոտությունը, 1972 թ.), առանձին դիտարկումների ենք հանդիպում Ցիցիլիա Բրուտյանի “Սփյուռքի հայ երաժիշտները” (1968), “Սփյուռքահայ երաժշտական մշակույթ” (1982) և “Հայ երաժշտական մշակույթի աշխարհասփյուռ ընձյուղները” (1996) մենագրություններում:

Այդուհանդերձ, մինչ օրս Ալան Հովհաննեսի մասին չկար ամփոփ մենագրություն: Հայ երաժշտագիտության մեջ այդ բացն է լրացնում ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի Երաժշտության բաժնի առաջատար գիտաշխատող, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Լիլիթ Երնջակյանի “Ալան Հովհաննեսի երաժշտությունը Արևելք–Արևմուտք մշակութային խաչուղիներում” մենագրությունը, որը հրատարակվել է Արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ և անհրաժեշտ քայլ է ու հանգրվան սփյուռքահայ արվեստի լիակատար պատմության ստեղծման ճանապարհին:

Նշենք, որ Լ. Երնջակյանը երկար տարիներ զբաղվում է Արևելք–Արևմուտք մշակութաբանական հիմնախնդրով և հայ կոմպոզիտորական արվեստին առնչվող հարցերով, իսկ գիտական հիմնարար ուսումնասիրությունները նվիրված են Արևելքի ավանդական, դասական երաժշտության, հայ հոգևոր և աշու-

ղական երաժշտարվեստի, հայ-իրանական, հայ-թուրքական երաժշտական փոխառնչությունների խնդիրներին: Սույն մենագրությունը հիմնված է հեղինակի դիպլոմային աշխատանքի վրա, որը տասնամյակների ընթացքում համալրվել ու հարստացել է փաստական նոր նյութերի ընդգրկումով և դիտարկումներով: Իսկ առանցքն Արևելքի ու Արևմուտքի մշակութային փոխառնչությունների լուսաբանությունն է և այդ հետազոտությունների շարքի անդրանիկ ուսումնասիրությունը:

Լ. Երնջակյանն իր առջև նպատակ է դրել ներկայացնել Արևմուտքի կոմպոզիտորի ստեղծագործության մեջ Արևելքի ընկալման հիմքերն ու արտացոլման սկզբունքները, որը դիտարկվում է Ալան Հովհաննես կոմպոզիտորի հայկական ինքնության հայտնությամբ: Այս թեզն է ընդգծված մենագրության տարբեր բաժիններում: Աշխատության հեղինակը ծագումով հայ-շոտլանդացի կոմպոզիտորի շրջադարձը դեպի Արևելք բացատրում է ազգային ինքնության գիտակցված ընկալումով. "Հայկականությունը ոչ միայն տարեթվերով սահմանազատված փուլ է Ալան Հովհաննեսի ստեղծագործական տարեգրության մեջ, այլև սեփական "ես"-ի բացահայտում, ինքնաընկալման տարածք ու ելակետ՝ համաարևելյան քաղաքակրթության տարբեր ոլորտներին հաղորդակցվելու առումով" (էջ 10):

Արխիվային նյութերի, օտարալեզու սկզբնաղբյուրների և մամուլից քաղված տեղեկությունների հիման վրա շարադրված աշխատության մեջ հեղինակը ներկայացրել է կոմպոզիտորի անցած ստեղծագործական ուղին, բացահայտել Արևելք–Արևմուտք մշակութային երկխոսության դրսևորումները՝ տարբեր ժամանակաշրջաններում գրված նրա երաժշտական երկերում, քննության ենթարկել հայկական ու արևելյան թեմաներ արծարծող ստեղծագործություններում ձևավորված մեղեդային մտածողության տեսական-գեղագիտական հիմքերն ու հոգևոր-խորհրդապաշտական ոլորտները:

Լ. Երնջակյանն ուսումնասիրել է Երևանի Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում պահվող կոմպոզիտորի անձնական արխիվի նյութերը, հանգամանորեն հետազոտել նաև Ալան Հովհաննեսի վերաբերյալ ամերիկյան համալսարանների գրադարաններում պահվող գրեթե բոլոր հետազոտություններն ու պարբերական մամուլում հրատարակված գրախոսականները և հոդվածները:

Մենագրության կառուցվածքը կուռ է և տրամաբանական: Բովանդակությանը համապատասխան՝ այն բաղկացած է 4 բաժիններից:

Առաջին՝ "Ալան Հովհաննեսի ստեղծագործական կենսագրությունը" բաժնում Լ. Երնջակյանը, մանրամասն նկարագրելով կոմպոզիտորի ստեղծագործական գործունեության առանցքային փուլերը, կարևորում է 1940–1950 թթ.

ստեղծագործական տարեգրության հայկական շրջանը, որը վճռորոշ փուլ էր ինչպես կոմպոզիտորի հետագա վերելքի և ճանաչման, այնպես էլ՝ համաշխարհային երաժշտարվեստում նրա ընդունման ու մեծարման հարցում: Ինչպես տեղեկանում ենք այս բաժնում ընդգրկված նյութերից, կոմպոզիտորի ստեղծագործական ունակություններն ի հայտ են եկել դեռևս 4 տարեկան հասակում: Նախնական կրթություն է ստացել Թաֆթի երաժշտական դպրոցում, ապա՝ ուսումնառությունը շարունակել Բոստոնի Նյու Ինգլանդ կոնսերվատորիայում՝ Ֆրեդերիկ Կոնվերսի մասնագիտական դասարանում: 1942 թ. Բոստոնի Թանգլվուդ համալսարանն Ալան Հովհաննեսին շնորհել է կրթաթոշակ՝ չեխ կոմպոզիտոր Բոհուսլավ Մարտինուի դասարանում կատարելագործվելու նպատակով, որը նա անավարտ է թողել:

Ալան Հովհաննեսն իր անդրանիկ օպերաները՝ "Lotus Blossom" ("Ծաղկած Ջրաշուշան") և "Bluebeard and Daniel" ("Կապտամորուսն ու Դանիելը"), գրել է 14 տարեկանում: Բազմաժանր կոմպոզիտորի ստեղծագործական բեղուն գրչին են պատկանում ավելի քան 400 երաժշտական երկեր, որոնցից 67-ը սիմֆոնիաներ են: Ի դեպ, կոմպոզիտորը հրաժարվել և ոչնչացրել է իր ստեղծագործական առաջին շրջանի (1930–1940 թթ.) ավելի քան 500 ստեղծագործություն: Նրա ստեղծագործությունները 17 տարի շարունակ հրատարակվել և վաճառվել են "Edition Peters" հրատարակչության կողմից:

Ալան Հովհաննեսին պատվավոր դոկտորի կոչում են շնորհել Ռոչեստերի համալսարանը (1958 թ.), Բեյթսի քոլեջը (1959 թ.), Բոստոնի կոնսերվատորիան (1986 թ.) և մի շարք այլ հաստատություններ:

1965 թ. Մշակութային փոխանակման պետական ծրագրի հովանավորությամբ կոմպոզիտորն այցելել է Հայաստան ու Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանին նվիրել իր անձնական արխիվը:

Լ. Երնջակյանն ընդգրկուն ձևով ու հետաքրքրությամբ բացում է կոմպոզիտորի կյանքի ու գործունեության էջերը, ընթերցողին ծանոթացնում նրա ստեղծագործության ընդհանուր համայնապատկերին՝ որպես կոմպոզիտոր, դիրիժոր և կատարող:

Գրքի երկրորդ՝ "Արևելք–Արևմուտք երաժշտական աղերսները", բաժնում հեղինակը ներկայացրել է Արևելքի երաժշտական մշակույթին դիմելու ծագումնաբանական ակունքները, ինչպես նաև բնութագրական ու փաստագրական նյութերով վեր հանել Արևմուտքի երաժշտական մշակույթի ձևավորման տարբեր փուլերում Արևելքի ներգործությունը և անընդմեջ ներկայությունը: Լ. Երնջակյանը գրում է. "Մեր անդրադարձը միտված է ցուցադրելու արևելյան թեմաների և երաժշտական տարատեսակ երևույթների ներթափանցման դրսևորումներն Արևմուտքի կոմպոզիտորական արվեստում, որոնք, սահմանափակ գոր-

ծառույթով բաղադրատարր կամ այլության նշանակիր լինելուց բացի, մշակութային երկխոսության դինամիկ գործընթացում ձեռք բերեցին Արևմուտքի հոգևոր-ինտելեկտուալ աշխարհը ձևավորող անփոխարինելի գործոնի նշանակություն" (էջ 33): Նա նշում է, որ երաժշտության պատմության որևէ շրջան չի առանձնացել այսչափ բազմակերպությամբ, ինչպես՝ XX դարը, ուր գոյակցել են երաժշտական ամենատարբեր հոսանքները, ուղղություններն ու ոճերը:

Երրորդ՝ "Արևելյան ստեղծագործություններ" բաժնում Լ. Երնջակյանը ներկայացնում է Ալան Հովհաննեսի՝ արևելյան թեմաներով գրված սիմֆոնիկ և կամերային ստեղծագործությունները, որոնք հենվում են հնդկական, ճապոնական, կորեական երաժշտության հնագույն ավանդույթների վրա: Ի դեպ, Ալան Հովհաննեսի գրչին են պատկանում ինչպես չինական, պարսկական, Հավայան կղզիների թեմաներով գրված ստեղծագործություններ, այնպես էլ՝ փոքր կտավի մի շարք գործեր՝ օսեթական, կիրգիզական, քրդական, հունական և արևելյան այլ թեմաներով: Ըստ այդմ՝ մենագրության մեջ ուսումնասիրության համար ընտրված ստեղծագործություններում տիպականորեն բացահայտվում են ինչպես կոմպոզիտորական երաժշտության մեջ ավանդական ժանրերի մարմնավորման սկզբունքները, այնպես էլ՝ Արևելք–Արևմուտք մշակութային փոխազդեցություն գործոնը:

Այս բաժնում քննության են առնվել թիվ 8 "Արջունա" սիմֆոնիան՝ դաշնամուրի, լիտավրների և նվագախմբի համար (1947), "Մադրասյան" սոնատը՝ դաշնամուրի համար (1947), "Նագուրան" ստեղծագործությունը՝ հարավհնդկական գործիքներից կազմված նվագախմբի համար (1960), "Koke no niwa" ("Մամոտ այգի") կամերային ստեղծագործությունը՝ անգլիական եղջրակի, հարվածային գործիքների և տավիղի համար (1954), "Ֆանտազիա ըստ ճապոնական փայտագրությունների" երկը՝ գրված պայմանական կազմ ունեցող նվագախմբի համար (ըստ կատարման տեղի ու հնարավորությունների և ընդգրկում է փողային, հարվածային և լարային խմբեր, 1964), թիվ 15-րդ "Արծաթե ուխտագնացություն" (1962) և թիվ 16-րդ սիմֆոնիաները (1962): Լ. Երնջակյանը նշում է, որ Ալան Հովհաննեսի արևելյան երկերում դրսևորվում են ընդհանուր սկզբունքներ և հայկական տարրի առկայություն:

Չորրորդ՝ "Հայկական ստեղծագործություններ", բաժինը նվիրված է հայկական ոճի ամենացայտուն, գեղարվեստական առումով հետաքրքիր և ժանրային բազմազանությամբ հարուստ ստեղծագործությունների քննությանը: Ըստ այդմ՝ հեղինակն առանձնացրել է և վերլուծել "Արարատ" սիմֆոնիան՝ փողային նվագախմբի համար (1960), "Սուրբ Վարդան" սիմֆոնիան՝ լարային նվագախմբի համար (1950), "Անահիտ" ֆանտազիան, թիվ 2-րդ և 3-րդ "Հայկական ռապսոդիաները"՝ լարային նվագախմբի համար, "Լուսածագը"՝ դաշնամուրի և լարա-

յին նվագախմբի համար (1944), “Վանա լճի սոնատը” (1946) և “Ախթամար” (1948) պիեսը դաշնամուրի համար, 12 հայկական ժողովրդական երգերը՝ մշակված դաշնամուրի համար: Լ. Երնջակյանը եզրակացնում է, որ ինչպես արևելյան, այնպես էլ հայկական ստեղծագործություններում առկա է ֆոլկլորային նյութի օգտագործման հեղինակային սկզբունքը, այն է՝ հնարավորինս խուսափել նյութի պարզ մեջբերումներից:

Մենագրության հիմնականում վերլուծական ուղղվածություն ունեցող երրորդ և չորրորդ բաժիններում հեղինակը ոճական-կառուցվածքային քննության է ենթարկում յուրաքանչյուր ստեղծագործության ինտոնացիոն, լադային, մետրառիթմական, մեղեդիական առանձնահատկությունները, նշում ստեղծագործության ընդհանուր բնույթը, շարադրում արևելյան ոճի բնութագրական հատկանիշները և հանգում երաժշտագիտական ընդհանրացումների:

Ալան Հովհաննեսի երաժշտության ուսումնասիրության արդյունքում Լ. Երնջակյանը եզրակացնում է. “Ալան Հովհաննեսի ստեղծագործությունն անընդգրկելի է իր ժանրային ու թեմատիկ բազմազանությամբ, արևելյան հետաքրքրությունների լայն շրջանակով և տարբեր արևելյան մշակութային իրողությունների գեղագիտական, փիլիսոփայական հիմքերի հավատամքային ըմբռնումով ու երաժշտական վերաարարումով” (էջ 115): Ապա՝ “…Ալան Հովհաննեսի ստեղծագործությունը ժամանակակից արվեստի բարդ դրսևորումներից է և իր անխախտ տեղն ունի Արևելք–Արևմուտք երաժշտական արվեստների փոխներթափանցման ուղիներում” (էջ 115–116):

Աշխատության կարևոր արժանիքներից է գեղարվեստական միտումների բազմազանությամբ օժտված առավել հետաքրքիր երկերի ընդգրկումը և վերլուծությունը, ինչը հնարավորություն է ընձեռում ամբողջական պատկերացում կազմել կոմպոզիտորի ստեղծագործությունների մեջ արևելյան հիմնական նախասիրությունների, գեղարվեստական ճաշակի և մտածելակերպի վերաբերյալ:

Մենագրությունը սփյուռքահայ երաժշտության ուսումնասիրության գործում, անկասկած, մեծ ներդրում է, որը, կարծում եմ, կնպաստի Ալան Հովհաննեսի ստեղծագործությունների պրոպագանդմանը՝ Հայաստանում և արտերկրում:

ԼԻԼԻԹ ԱՐՏԵՄՅԱՆ